Հաստատվել է
«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի 2026թ. հունիսի 29-ի թիվ 8 նիստում
Գիտական խորհրդի նախագահ
_____ Լիլիթ Մկրտչյան

«ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կանոնագրքի կարգավորման առարկան

1. Սույն վարքագծի կանոնագիրքը, այսուհետ՝ Կանոնագիրք, սահմանում է «Խ□Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի, այսուհետ՝ Համալսարան, համայնքի անդամների վարքագծի պարտադիր և խրախուսելի կանոնները, մասնագիտական էթիկայի, բարեվարքության, ակադեմիական ազնվության, ակադեմիական ազատության, շահերի բախման կանխարգելման, նվերների և առավելությունների ընդունման սահմանափակումների, անձնական տվյալների և ոչ հրապարակային տեղեկատվության պաշտպանության, քաղաքական չեզոքության, հաղորդումների ներկայացման, հաշվառման, ուսումնասիրության, արձագանքման և Կանոնագրքի վերանայման ընդհանուր կարգավորումները:

2. Սույն Կանոնագրքի նպատակն է Համալսարանում ամրապնդել՝
   1) մարդու արժանապատվության հարգումը,
   2) ակադեմիական ազատությունը և ակադեմիական պատասխանատվությունը,
   3) ակադեմիական ազնվությունը,
   4) բարեվարքությունը և կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականությունը,
   5) հավասարությունը և խտրականության բացառումը,
   6) անվտանգ, ներառական և աջակցող կրթական միջավայրը,
   7) օբյեկտիվությունը և անաչառությունը,
   8) կրթական հանրային շահին ծառայելու գիտակցումը,
   9) Համալսարանի նկատմամբ հանրային վստահությունը:

3. Սույն Կանոնագիրքը Համալսարանի ներքին իրավական ակտ է և կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը և Համալսարանի ներքին իրավական ակտերին համապատասխան:

4. Սույն Կանոնագիրքը չի փոխարինում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, աշխատանքային պայմանագրերով, ուսումնառության պայմանագրերով, Համալսարանի կանոնադրությամբ և Համալսարանի ներքին իրավական ակտերով սահմանված իրավունքներին, պարտականություններին և պատասխանատվության միջոցներին, այլ լրացնում է դրանք էթիկայի, բարեվարքության և վարքագծի չափանիշների մասով:

2. Կանոնագրքի գործողության շրջանակը

1. Սույն Կանոնագրքի գործողությունը տարածվում է Համալսարանի համայնքի հետևյալ անդամների վրա՝
   1) Համալսարանի կառավարման մարմինների անդամների,
   2) կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների,
   3) ակադեմիական անձնակազմի ներկայացուցիչների,
   4) վարչական անձնակազմի ներկայացուցիչների,
   5) ուսումնաօժանդակ անձնակազմի ներկայացուցիչների,
   6) գիտաշխատողների,
   7) հրավիրված դասախոսների, փորձագետների և խորհրդատուների,
   8) բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի սովորողների,
   9) վերապատրաստվողների և լրացուցիչ կրթական ծրագրերի մասնակիցների,
   10) պրակտիկանտների, կամավորների և ծրագրային մասնակիցների,
   11) Համալսարանի տարածքում, Համալսարանի անունից կամ Համալսարանի հետ համագործակցության շրջանակում կրթական, գիտական, վարչական, հետազոտական, փորձագիտական կամ այլ գործունեության մեջ ներգրավված անձանց:

2. Սույն Կանոնագիրքը կիրառվում է՝
   1) Համալսարանի տարածքում,
   2) ուսումնական, գիտական, վարչական, հետազոտական, աշխատանքային և արտահամալսարանական գործունեության ընթացքում,
   3) Համալսարանի կողմից կազմակերպվող կամ Համալսարանի անունից իրականացվող միջոցառումների ժամանակ,
   4) առցանց ուսուցման, էլեկտրոնային նամակագրության, թվային հարթակների, սոցիալական ցանցերի և այլ հաղորդակցման միջոցների օգտագործման ընթացքում,
   5) Համալսարանի տարածքից դուրս դրսևորված այն վարքագծի նկատմամբ, որն անմիջականորեն առնչվում է համալսարանական հարաբերություններին, կրթական գործընթացին, աշխատանքային կամ ակադեմիական հարաբերություններին կամ կարող է էական վնաս հասցնել Համալսարանի հեղինակությանը, կրթական միջավայրին կամ հանրային վստահությանը:

3. Սույն Կանոնագրքի դրույթները կիրառվում են այնքանով, որքանով դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը և ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող այլ իրավական ակտերին:

3. Կանոնագրքի իրավական հիմքերը

1. Սույն Կանոնագիրը մշակվել և կիրառվում է՝ հիմք ընդունելով՝
   1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը,
   2) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերը,
   3) «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքը,
   4) «Կրթության մասին» ՀՀ օրենքը,
   5) Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը,
   6) «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը,
   7) «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքը,
   8) «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը,
   9) «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը,
   10) Համալսարանի կանոնադրությունը,
   11) Համալսարանի ներքին կարգապահական, ակադեմիական, վարչական, որակի ապահովման, անձնական տվյալների պաշտպանության, ազդարարման, էթիկայի հանձնաժողովի գործունեության և փաստաթղթաշրջանառության վերաբերյալ ներքին իրավական ակտերը:

4. Կանոնագրքի սկզբունքները

1. Սույն Կանոնագրքի կիրառումը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝
   1) օրինականության,
   2) մարդու արժանապատվության նկատմամբ հարգանքի,
   3) Համալսարանի կրթական, գիտական և հանրային առաքելությանը հավատարմության,
   4) ակադեմիական ազատության և ակադեմիական պատասխանատվության,
   5) ակադեմիական ազնվության,
   6) բարեվարքության,
   7) կոռուպցիայի նկատմամբ զգոնության և անհանդուրժողականության,
   8) հավասարության և խտրականության բացառման,
   9) բարեկրթության և հարգալիրության,
   10) բարեխղճության,
   11) օբյեկտիվության և անաչառության,
   12) շահերի բախման կանխարգելման,
   13) քաղաքական չեզոքության կրթական և աշխատանքային միջավայրում,
   14) անձնական տվյալների և ոչ հրապարակային տեղեկատվության պաշտպանության,
   15) Համալսարանի ռեսուրսների խնայող և նպատակային օգտագործման,
   16) հաղորդողի, ազդարարի, տուժողի և վկայի պաշտպանության,
   17) համաչափության,
   18) կանխարգելման, աջակցության,
   19) ընթացակարգային կանխատեսելիության:

2. Սույն Կանոնագրքի որևէ դրույթ չի կարող մեկնաբանվել որպես անձի՝ օրենքով երաշխավորված իրավունքների և ազատությունների սահմանափակում, եթե այդպիսի սահմանափակումը նախատեսված չէ օրենքով:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5. Կանոնագրքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն Կանոնագրքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝
   1) Համալսարան՝ «Խ□Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ,
   2) համալսարանական համայնք՝ սույն Կանոնագրքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձանց ամբողջությունը,
   3) վարքագծի կանոններ՝ սույն Կանոնագրքով սահմանված նորմեր, որոնք կարգավորում են համալսարանական համայնքի անդամների բարեվարք գործելակերպը Համալսարանի հետ կապված գործունեության ընթացքում և, սույն Կանոնագրքով նախատեսված դեպքերում, դրանից դուրս,
   4) պարտադիր վարքականոն՝ վարքագծային պահանջ, որի պահպանումը պարտադիր է Կանոնագրքի գործողության շրջանակում գտնվող անձանց համար,
   5) խրախուսելի վարքականոն՝ օրինակելի վարքագծի չափանիշ, որը պարտադիր նվազագույնից ավելին է և բնորոշում է բարձր մասնագիտական, բարեվարք և աջակցող վարքագիծ Համալսարանում,
   6) էթիկական խախտում՝ գործողություն կամ անգործություն, որը հակասում է սույն Կանոնագրքի պարտադիր վարքականոններին, Համալսարանի ներքին իրավական ակտերին կամ ակադեմիական և մասնագիտական բարեվարքության պահանջներին,
   7) ակադեմիական ազնվություն՝ ուսումնառության, դասավանդման, հետազոտության, գնահատման և գիտական հաղորդակցության ընթացքում ճշմարտացիության, ինքնուրույնության, աղբյուրների պատշաճ նշման, տվյալների հավաստիության, մտավոր սեփականության հարգման և արդար գնահատման սկզբունքների պահպանում,
   8) ակադեմիական անազնվություն՝ ակադեմիական ազնվության կանոնների խախտում, այդ թվում՝ գրագողություն, կեղծիք, ուրիշի աշխատանքի յուրացում, չթույլատրված օգնության օգտագործում, արհեստական բանականության գործիքների օգտագործում՝ առանց թույլատրելիության, թափանցիկության, ինքնուրույնության կամ աղբյուրի նշման պահանջների պահպանման, կամ գնահատման գործընթացի վրա ոչ իրավաչափ ազդեցության փորձ,
   9) կրթական հանրային շահ՝ բարձրագույն կրթության, գիտության, մանկավարժական մասնագիտության, ուսանողների իրավունքների, ակադեմիական ազատության, կրթական միջավայրի անվտանգության, հասարակության արժեքային և մասնագիտական զարգացման ապահովմանն ուղղված իրավաչափ շահ, որի պաշտպանությունը գերակա է անձնական, խմբային, գույքային, քաղաքական կամ այլ մասնավոր շահերի նկատմամբ,
   10) շահերի բախում՝ իրավիճակ, երբ անձի մասնավոր, ընտանեկան, գույքային, ֆինանսական, մասնագիտական, ակադեմիական, քաղաքական կամ այլ շահը ազդում է կամ կարող է ազդել նրա

պաշտոնական, աշխատանքային, ակադեմիական կամ վարչական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա,

11) պաշտոնական կամ ակադեմիական դիրքի չարաշահում՝ պաշտոնից, հեղինակությունից, գնահատման, վերահսկողության, որոշման կամ վարչական լիազորությունից օգտվելը անձնական, խմբային, գույքային, քաղաքական կամ այլ ոչ իրավաչափ շահ ստանալու կամ այլ անձի նկատմամբ ոչ իրավաչափ ազդեցություն գործադրելու նպատակով,

12) խտրականություն՝ անձի նկատմամբ ուղղակի կամ անուղղակի տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նվազ բարենպաստ վերաբերմունք՝ օրենքով արգելված հատկանիշի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքի հիմքով, բացառությամբ օրենքով թույլատրելի, իրավաչափ նպատակ հետապնդող, անհրաժեշտ և համաչափ տարբերակման դեպքերի,

13) սեռական ոտնձգություն՝ սեռական բնույթի խոսքային, ոչ խոսքային, ֆիզիկական կամ այլ դրսևորում ունեցող անցանկալի գործողություն կամ իրավիճակ, որը նպատակ ունի խոցելու անձի արժանապատվությունը կամ հանգեցնում է դրան, մասնավորապես՝ ստեղծելով վախեցնող, ճնշող, թշնամական, նվաստացնող, վիրավորական կամ անհարմար միջավայր,

14) բուլինգ՝ կրկնվող կամ ակնհայտորեն վնասող վարքագիծ, որը դրսևորվում է անձի ծաղրի, նվաստացման, սպառնալիքի, մեկուսացման, պիտակավորման կամ խմբային թիրախավորման ձևով,

15) մոբինգ՝ աշխատանքային կամ ուսումնական միջավայրում անձի նկատմամբ շարունակական հոգեբանական ճնշում, մեկուսացում, հեղինակազրկում, մասնագիտական խոչընդոտում կամ համակարգային անբարենպաստ վերաբերմունք,

16) նեպոտիզմ՝ ազգակցական կամ մերձավոր կապերով պայմանավորված արտոնյալ վերաբերմունք, որը ազդում է կամ կարող է ազդել որոշման անաչառության վրա,

17) ֆավորիտիզմ՝ անձնական համակրանքով, ոչ ֆորմալ կապերով կամ խմբային պատկանելությամբ պայմանավորված արտոնյալ վերաբերմունք,

18) նվեր՝ գույքային կամ ոչ գույքային առավելություն, այդ թվում՝ գումար, գույք, ծառայություն, հրավեր, զեղչ, արտոնություն, հյուրընկալություն կամ այլ օգուտ, եթե այն կարող է ազդել կամ ողջամտորեն ընկալվել որպես ազդեցություն անձի ակադեմիական, աշխատանքային, վարչական կամ մասնագիտական որոշման վրա,

19) ոչ նյութական առավելություն՝ արտոնյալ վերաբերմունք, ծառայություններից հերթից դուրս կամ արագացված օգտվելու հնարավորություն, անվճար կամ զեղչված մասնակցություն միջոցառման, ճամփորդության, վերապատրաստման կամ այլ ծրագրի, բարեխոսություն, ոչ իրավաչափ միջնորդություն կամ այլ առավելություն, որի դրամական արժեքը կարող է ակնհայտ չլինել,

20) ռեսուրսներ՝ Համալսարանի գույքը, ֆինանսական միջոցները, տեխնիկական միջոցները, տեղեկատվական համակարգերը, տվյալները, փաստաթղթերը, աշխատաժամանակը, ուսումնական ժամանակը, մարդկային ռեսուրսները, տարածքները, գրադարանային և գիտական ռեսուրսները, Համալսարանի խորհրդանիշները և գործարար համբավը,

21) հաղորդում՝ գրավոր, էլեկտրոնային, բանավոր կամ անանուն ձևով ներկայացված տեղեկություն ենթադրյալ էթիկական, ակադեմիական, աշխատանքային, կազմակերպչական, բարեվարքության կամ այլ խախտման վերաբերյալ,

22) հաղորդող՝ անձ, որը բարեխղճորեն ներկայացնում է հաղորդում ենթադրյալ խախտման, մտահոգության կամ համակարգային խնդրի վերաբերյալ,
23) ազդարար՝ «Ազդարարման համակարգի մասին» օրենքի իմաստով հաղորդում ներկայացնող անձ,
24) պատասխանող անձ՝ անձ, որի գործողության կամ անգործության վերաբերյալ ներկայացվել է հաղորդում կամ դիմում,
25) տուժող անձ՝ անձ, որի իրավունքներին կամ օրինական շահերին ենթադրյալ խախտմամբ պատճառվել կամ կարող է պատճառվել վնաս,
26) վկա՝ անձ, որը կարող է տեղեկություն տրամադրել ուսումնասիրվող դեպքի հանգամանքների վերաբերյալ,
27) վրեժխնդրություն՝ հաղորդողի, ազդարարի, տուժողի, վկայի կամ ուսումնասիրությանը աջակցող անձի նկատմամբ բացասական գործողություն կամ անբարենպաստ վերաբերմունք՝ հաղորդում ներկայացնելու, բացատրություն տալու կամ ուսումնասիրությանը մասնակցելու պատճառով,
28) անձնական տվյալներ՝ անձին վերաբերող այնպիսի տվյալներ, որոնց միջոցով անձը նույնականացված է կամ կարող է նույնականացվել,
29) ոչ հրապարակային տեղեկատվություն՝ Համալսարանի գործունեության, ուսումնական, աշխատանքային, գիտական, վարչական, կարգապահական, էթիկական կամ այլ գործընթացների վերաբերյալ տեղեկություն, որը օրենքով, պայմանագրով, ներքին իրավական ակտով կամ տվյալ գործընթացի բնույթով նախատեսված չէ հրապարակման համար կամ դեռևս պաշտոնապես չի հրապարակվել,
30) գաղտնի տեղեկատվություն՝ հաղորդման, ուսումնասիրության, կողմերի, վկաների, ապացույցների, հանձնաժողովի քննարկումների, անձնական տվյալների կամ ոչ հրապարակային տեղեկատվության վերաբերյալ տեղեկություն, որը ենթակա չէ հրապարակման, բացառությամբ օրենքով կամ ներքին իրավական ակտերով նախատեսված դեպքերի:

ԳԼՈՒԽ 3. ՊԱՐՏԱԴԻՐ ԵՎ ԽՐԱԽՈՒՍԵԼԻ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

6. Պարտադիր վարքականոնները

1. Պարտադիր վարքականոնները սույն Կանոնագրքով սահմանված այն պահանջներն են, որոնց պահպանումը պարտադիր է Կանոնագրքի գործողության շրջանակում գտնվող անձանց համար:
2. Պարտադիր վարքականոնների խախտումը կարող է առաջացնել էթիկական ուսումնասիրություն, կանխարգելիչ կամ վերականգնողական արձագանք, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, պայմանագրերով կամ Համալսարանի ներքին իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ կարգապահական կամ այլ պատասխանատվության հարցի քննարկում:
3. Պարտադիր վարքականոնի խախտումն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ կարգապահական պատասխանատվության համար, եթե տվյալ արարքը որպես կարգապահական խախտում նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, աշխատանքային կամ ուսումնառության պայմանագրով կամ Համալսարանի ներքին իրավական ակտերով:

7. Խրախուսելի վարքականոնները

1. Խրախուսելի վարքականոնները բնորոշում են Համալսարանում օրինակելի և բարձր մասնագիտական վարքագիծը:
2. Խրախուսելի վարքականոնները պարտադիր նվազագույնից ավելին են և ուղղված են բարեվարք, վստահելի, աջակցող և որակյալ կրթական միջավայրի ձևավորմանը:
3. Խրախուսելի վարքականոնների չպահպանումը ինքնին չի կարող հիմք հանդիսանալ կարգապահական կամ այլ պատասխանատվության համար, եթե տվյալ վարքագիծը միաժամանակ չի խախտում սույն Կանոնագրքի պարտադիր վարքականոնները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, պայմանագրային պարտավորությունները կամ Համալսարանի ներքին իրավական ակտերը:

ԳԼՈՒԽ 4. ՊԱՐՏԱԴԻՐ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐ

8. Օրինականության պահանջը

1. Համալսարանական համայնքի անդամը պարտավոր է գործել իրավունքի գերակայության սկզբունքին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը և Համալսարանի ներքին իրավական ակտերին համապատասխան:
2. Համալսարանական համայնքի անդամը պարտավոր է զերծ մնալ այնպիսի վարքագծից, որը կարող է ընկալվել որպես անօրինականության խրախուսում, դրա նկատմամբ հանդուրժողականություն կամ օրինավոր վարքագծի նկատմամբ անհարգալից վերաբերմունք:
3. Համալսարանական համայնքի անդամը պարտավոր է չկատարել այնպիսի հանձնարարական, որը ակնհայտորեն հակասում է օրենքին, Համալսարանի կանոնադրությանը կամ սույն Կանոնագրքին, և այդ մասին տեղեկացնել անմիջական ղեկավարին կամ իրավասու ստորաբաժանմանը:

9. Կրթական հանրային շահին հավատարմությունը

1. Համալսարանական համայնքի անդամը պարտավոր է իր գործունեության ընթացքում առաջնորդվել կրթական հանրային շահով, Համալսարանի կրթական, գիտական և հանրային առաքելությամբ:
2. Համալսարանական համայնքի անդամը պարտավոր է զերծ մնալ այնպիսի վարքագծից, որը կարող է կասկածի տակ դնել իր պարտականությունները բարեխղճորեն կատարելու փաստը կամ վնաս հասցնել Համալսարանի հեղինակությանը, կրթական միջավայրին կամ հանրային վստահությանը:
3. Համալսարանական համայնքի անդամը պարտավոր է իր իրավասության սահմաններում բացահայտել, չթաքցնել և հնարավորինս շտկել իր կողմից թույլ տրված սխալները, բացթողումները կամ ոչ պատշաճ գործողությունները:
4. Եթե սխալը կամ բացթողումը կարող է ազդել ուսանողի, աշխատողի, գործընկերոջ, հետազոտության, գնահատման, անձնական տվյալների, ֆինանսական կամ վարչական որոշման վրա, անձը պարտավոր է այդ մասին տեղեկացնել անմիջական ղեկավարին կամ համապատասխան իրավասու ստորաբաժանմանը:

10. Մարդու արժանապատվության և հարգալից հաղորդակցության պահանջները

1. Համալսարանական համայնքի յուրաքանչյուր անդամ պարտավոր է՝

1) հարգել յուրաքանչյուր անձի արժանապատվությունը, իրավունքները, ազատությունները և օրինական շահերը,
2) պահպանել հարգալից, մասնագիտական և կառուցողական հաղորդակցություն,
3) զերծ մնալ վիրավորական, նվաստացնող, սպառնալից, խտրական կամ ոչ պատշաճ արտահայտություններից,
4) չտարածել անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը վնասող տեղեկություններ, եթե դրանք չեն բխում օրենքով սահմանված իրավաչափ նպատակից,
5) հարգել անձի անձնական սահմանները, անձնական տարածքը և հաղորդակցության ընդունելի ձևերը:

2. Արգելվում է՝
1) անձին վիրավորելը, նվաստացնելը, ծաղրելը կամ ստորացնելը,
2) անձի նկատմամբ հոգեբանական, ֆիզիկական կամ խոսքային ճնշում գործադրելը,
3) բուլինգի, մոբինգի, մեկուսացման կամ խմբային ճնշման իրականացումը, խրախուսումը կամ դիտավորությամբ անտեսումը,
4) անձի անձնական, ընտանեկան, առողջական, սոցիալական կամ այլ պաշտպանվող տվյալների ոչ իրավաչափ հրապարակումը,
5) անձի նկատմամբ թշնամական, նվաստացնող կամ վախեցնող միջավայրի ստեղծումը:

11. Խտրականության և սեռական ոտնձգության արգելքը

1. Համալսարանում արգելվում է խտրականությունը, սեռական ոտնձգությունը, հետապնդումը, բուլինգը, մոբինգը, նվաստացումը, վրեժխնդրությունը և անձի նկատմամբ ցանկացած այլ ոչ իրավաչափ անբարենպաստ վերաբերմունք:

2. Արգելվում է՝
1) անձի նկատմամբ անհավասար վերաբերմունք դրսևորելը օրենքով արգելված որևէ հատկանիշի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքի հիմքով.
2) կատարել սեռական բնույթի անցանկալի ակնարկներ, մեկնաբանություններ, առաջարկներ, կատակներ կամ այլ վարքագիծ.
3) ուղարկել կամ տարածել սեռական բնույթի անցանկալի հաղորդագրություններ, պատկերներ, տեսանյութեր կամ այլ նյութեր.
4) անձի նկատմամբ ստեղծել վախեցնող, նվաստացնող, վիրավորական, թշնամական կամ անհարմար միջավայր.
5) ուսումնական, աշխատանքային, վարչական կամ այլ կախվածությունն օգտագործել անձնական, սեռական, գույքային, մասնագիտական կամ այլ շահադիտական նպատակով.
6) խոչընդոտել անձի՝ իր իրավունքների պաշտպանության կամ հաղորդում ներկայացնելու հնարավորությանը.
7) վրեժխնդիր լինել հաղորդողից, ազդարարից, տուժողից, վկայից կամ ուսումնասիրությանը աջակցող անձից:

12. Ակադեմիական ազնվության պահանջները

1. Ակադեմիական անձնակազմը, գիտաշխատողները, ուսանողները և կրթական գործընթացին ներգրավված այլ անձինք պարտավոր են պահպանել ակադեմիական ազնվության կանոնները:

2. Արգելվում է՝
   1) ուրիշի աշխատանքը, գաղափարը, հետազոտությունը, տեքստը կամ արդյունքը ներկայացնել որպես սեփական,
   2) կատարել գրագողություն,
   3) կեղծել հետազոտական, ուսումնական, գնահատման կամ վարչական տվյալներ,
   4) քննությունների, ստուգարքների կամ առաջադրանքների ընթացքում օգտագործել չթույլատրված նյութեր, միջոցներ կամ օգնություն,
   5) պատվիրել, գնել, վաճառել, փոխանցել կամ պատրաստել ակադեմիական աշխատանք՝ այն ուրիշի կողմից որպես սեփական ներկայացնելու նպատակով,
   6) չնշել օգտագործված աղբյուրները, հեղինակներին կամ գաղափարների ծագումը,
   7) խոչընդոտել այլ անձի ուսումնառությանը, հետազոտական կամ ստեղծագործական աշխատանքին,
   8) արհեստական բանականության կամ այլ թվային գործիքների օգտագործմամբ խախտել ինքնուրույնության, թափանցիկության, հեղինակության նշման կամ գնահատման արդարության պահանջները:
3. Ակադեմիական անձնակազմը պարտավոր է ուսումնական գործընթացի սկզբում ուսանողներին ներկայացնել գնահատման չափորոշիչները, ակադեմիական ազնվության պահանջները և թույլատրելի օժանդակ միջոցների օգտագործման պայմանները:

13. Փոխհարաբերությունների էթիկան

1. Ղեկավարները, վարչական լիազորություն ունեցող անձինք և դասախոսները պարտավոր են պահպանել մասնագիտական սահմանները և չչարաշահել իրենց պաշտոնական, ակադեմիական կամ վարչական դիրքը:

2. Արգելվում է՝
   1) գնահատականը, քննությունը, ստուգարքը, հանձնարարականը, աշխատանքի ընդունումը, առաջխաղացումը, պարգևատրումը կամ այլ որոշում պայմանավորել անձնական հարաբերություններով, նվերով, ծառայությամբ, միջնորդությամբ կամ այլ ոչ իրավաչափ ազդեցությամբ,
   2) ուսանողին կամ աշխատակցին ներգրավել անձնական, ընտանեկան, առևտրային, կուսակցական, քաղաքական կամ այլ ոչ ուսումնական կամ ոչ աշխատանքային նպատակների համար, եթե դա չի բխում օրենքով, պայմանագրով կամ ներքին իրավական ակտով սահմանված պարտականություններից,
   3) պարտադրել մասնակցություն ոչ պարտադիր միջոցառման, նախաձեռնության կամ գործողության,
   4) անձնական համակրանքի, հակակրանքի, մերձավոր կապերի կամ ոչ ֆորմալ պայմանավորվածությունների հիմքով ցուցաբերել տարբերակված վերաբերմունք,

5) օգտագործել ուսանողի կամ աշխատակցի կախված վիճակը անձնական կամ այլ ոչ իրավաչափ շահ ստանալու նպատակով:

14. Շահերի բախման կանխարգելումը և կառավարումը

1. Համալսարանական համայնքի յուրաքանչյուր անդամ պարտավոր է խուսափել շահերի բախման իրավիճակներից:
2. Եթե Համալսարանական համայնքի անդամի կողմից կամ նրա մասնակցությամբ գործողության կատարումը, գնահատման իրականացումը, մրցույթի անցկացումը, նշանակման, ընտրության, ֆինանսավորման, պայմանագրի կնքման, պարգևատրման, կարգապահական կամ այլ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման, ապա տվյալ անձը պարտավոր է այդ մասին պաշտոնական հաղորդակցման միջոցով գրավոր տեղեկացնել անմիջական ղեկավարին, էթիկայի հանձնաժողովին կամ Համալսարանի իրավասու ստորաբաժանմանը:
3. Մինչև համապատասխան գրավոր դիրքորոշում, հանձնարարություն կամ ինքնաբացարկի հարցի լուծումը՝ անձը պարտավոր է զերծ մնալ տվյալ հարցով գործողություն կատարելուց, քննարկմանը մասնակցելուց, գնահատում իրականացնելուց կամ որոշում կայացնելուց:
4. Արգելվում է՝
   1) մասնակցել որոշման կայացմանը, եթե որոշումը վերաբերում է անձի մասնավոր, ընտանեկան, զույգային, ֆինանսական, մասնագիտական, ակադեմիական կամ այլ շահին,
   2) գնահատել, վերահսկել, ընտրել, նշանակել կամ որոշում կայացնել այն անձի վերաբերյալ, որի հետ առկա է մերձավոր, ազգակցական, ընկերական, գործնական, աշխատանքային կամ դիրքային կախվածության, հակասության կամ այլ շահագրգռվածության կապ,
   3) թաքցնել շահերի բախման իրական, հնարավոր կամ ընկալվող իրավիճակը,
   4) օգտագործել պաշտոնական կամ ակադեմիական լիազորությունը նեպոտիզմի, ֆավորիտիզմի կամ հովանավորչության նպատակով,
   5) խոչընդոտել շահերի բախման վերաբերյալ տեղեկության ներկայացմանը կամ ուսումնասիրությանը:

15. Նվերներ, ոչ նյութական առավելություններ և ոչ իրավաչափ ազդեցության փորձեր

1. Համալսարանական համայնքի անդամին արգելվում է պահանջել, ստանալ, առաջարկել կամ խոստանալ նվեր, ծառայություն, առավելություն, հյուրընկալություն, իրավեր, զեղչ, արտոնություն կամ այլ օգուտ, եթե դա կարող է ազդել կամ ողջամտորեն ընկալվել որպես ազդեցություն նրա պաշտոնական, ակադեմիական, վարչական կամ աշխատանքային որոշման վրա:
2. Համալսարանական համայնքի անդամին արգելվում է ընդունել ոչ նյութական առավելություն, եթե այն կարող է ազդել կամ ողջամտորեն ընկալվել որպես ազդեցություն նրա ակադեմիական, աշխատանքային, վարչական կամ մասնագիտական որոշման վրա:
3. Ոչ նյութական առավելություն կարող են համարվել, այդ թվում՝ արտոնյալ վերաբերմունքը, ծառայություններից հերթից դուրս կամ արագացված օգտվելու հնարավորությունը, անվճար կամ զեղչված մասնակցությունը միջոցառման, ճամփորդության, վերապատրաստման կամ այլ ծրագրի

բարեխոսությունը, ոչ իրավաչափ միջնորդությունը կամ այլ առավելություն, որի դրամական արժեքը կարող է ակնհայտ չլինել:

4. Եթե անձը անկախ իր կամքից ստացել է նվեր կամ ոչ նյութական առավելություն կամ կասկած ունի դրա թույլատրելիության վերաբերյալ, պարտավոր է անմիջապես գրավոր տեղեկացնել անմիջական ղեկավարին, էթիկայի հանձնաժողովին կամ իրավասու ստորաբաժանմանը և մինչև պարզաբանում ստանալը չօգտվել այդ նվերից կամ առավելությունից:

5. Նվերների, հյուրընկալության, փոխհատուցման և այլ առավելությունների հետ կապված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Համալսարանի ներքին իրավական ակտերով:

16. Քաղաքական չեզոքությունը և կրթական միջավայրի ապաքաղաքականությունը

1. Համալսարանական համայնքի անդամները համալսարանական, ուսումնական, աշխատանքային կամ վարչական պարտականությունները կատարելիս պարտավոր են պահպանել քաղաքական չեզոքություն և չօգտագործել իրենց պաշտոնական, ակադեմիական կամ վարչական դիրքը որևէ կուսակցության, քաղաքական միավորման, թեկնածուի կամ քաղաքական նախաձեռնության օգտին կամ դեմ ազդեցություն գործադրելու նպատակով:

2. Արգելվում է՝
   1) Համալսարանի տարածքում, ուսումնական գործընթացում, դասախոսության, քննության, գնահատման, պրակտիկայի, պաշտոնական հանդիպման կամ վարչական գործընթացի ընթացքում իրականացնել կուսակցական կամ նախընտրական քարոզչություն, եթե դա ուղղակիորեն չի բխում օրենքով թույլատրված և Համալսարանի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով իրականացվող ակադեմիական կամ հանրային քննարկման ձևաչափից,
   2) ուսանողներին, աշխատակիցներին կամ այլ անձանց պարտադրել մասնակցել կուսակցական, նախընտրական կամ քաղաքական բնույթի միջոցառման,
   3) գնահատումը, աշխատանքային կամ ուսումնական վերաբերմունքը պայմանավորել անձի քաղաքական հայացքներով, քաղաքական մասնակցությամբ կամ քաղաքական չեզոքությամբ,
   4) Համալսարանի գույքը, տարածքը, պաշտոնական էլեկտրոնային հասցեները, թվային հարթակները, խորհրդանիշները կամ այլ ռեսուրսները օգտագործել կուսակցական կամ նախընտրական քարոզչության նպատակով,
   5) Համալսարանի անունից քաղաքական դիրքորոշում ներկայացնել առանց համապատասխան լիազորության:

3. Սույն հոդվածի դրույթները չեն սահմանափակում ակադեմիական ազատության շրջանակում քաղաքականության, ժողովրդավարության, ընտրությունների, հանրային կառավարման, մարդու իրավունքների կամ այլ թեմաների գիտական, կրթական կամ մասնագիտական քննարկումը, եթե այն իրականացվում է չեզոք, բազմակարծիք և ոչ քարոզչական ձևաչափով:

17. Պաշտոնական հաղորդակցություն, հանրային խոսք և սոցիալական ցանցեր

1. Համալսարանական համայնքի անդամը Համալսարանի անունից կարող է հանդես գալ, հայտարարություն անել, հարցազրույց տալ կամ պաշտոնական դիրքորոշում հայտնել միայն համապատասխան լիազորության առկայության դեպքում:
2. Պաշտոնական հաղորդակցության ժամանակ անձը պարտավոր է պահպանել Համալսարանի հաղորդակցության կանոնները, հաստատված դիրքորոշումները, գաղտնիության պահանջները և անձնական տվյալների պաշտպանության կանոնները:
3. Սոցիալական ցանցերում Համալսարանական համայնքի անդամը պարտավոր է զերծ մնալ այնպիսի գրառումներից, մեկնաբանություններից, հավանումներից կամ տարածումներից, որոնք կարող են ողջամտորեն ընկալվել որպես՝
   1) Համալսարանի հեղինակության նսեմացում,
   2) Համալսարանի համայնքի անդամի արժանապատվության խախտում,
   3) խտրականություն, ոտնձգություն, սպառնալիք կամ թիրախավորում,
   4) ոչ հրապարակային կամ անձնական տվյալների բացահայտում,
   5) Համալսարանի անունից չլիազորված պաշտոնական դիրքորոշման ներկայացում:
4. Սույն հոդվածը չի սահմանափակում անձի արտահայտվելու ազատությունը, ակադեմիական քննադատությունը կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ կարծիք հայտնելը, եթե դա իրականացվում է հարգալից, փաստարկված, իրավաչափ և ոչ ապատեղեկատվական ձևով:

18. Անձնական տվյալների, գաղտնի և ոչ հրապարակային տեղեկատվության պաշտպանություն

1. Համալսարանական համայնքի յուրաքանչյուր անդամ պարտավոր է պահպանել անձնական տվյալների, գաղտնի տեղեկատվության և ոչ հրապարակային տեղեկատվության պաշտպանության պահանջները:
2. Արգելվում է՝
   1) առանց իրավաչափ հիմքի հավաքել, մշակել, փոխանցել, հրապարակել կամ օգտագործել անձնական տվյալներ,
   2) հրապարակել կամ փոխանցել ուսանողների, աշխատողների կամ այլ անձանց գնահատականները, անձնական, ընտանեկան, առողջական, սոցիալական, կարգապահական կամ այլ պաշտպանված տվյալները,
   3) տարածել հաղորդումների, էթիկական ուսումնասիրությունների, հանձնաժողովի քննարկումների կամ դրանց մասնակիցների վերաբերյալ գաղտնի տեղեկություններ,
   4) ծառայողական, ակադեմիական կամ ներքին տեղեկատվությունն օգտագործել անձնական շահի կամ այլ անձին վնաս պատճառելու նպատակով,
   5) առանց իրավաչափ հիմքի ձայնագրել, նկարահանել կամ հրապարակել փակ քննարկումներ, դասեր, հանդիպումներ, քննություններ, խորհրդակցություններ կամ անձնական հաղորդակցություն:
   6) Անձնական տվյալների մշակումը պետք է իրականացվի օրինական, որոշակի, հստակ և իրավաչափ նպատակով, տվյալների նվազագույն անհրաժեշտության, գաղտնիության և անվտանգության ապահովման սկզբունքներին համապատասխան:
   7) Համալսարանական համայնքի անդամը պարտավոր է չհրապարակել, չփոխանցել և այլ նպատակներով չօգտագործել իր ուսումնական, աշխատանքային, ակադեմիական, վարչական կամ

մասնագիտական պարտականությունների կատարման կապակցությամբ իրեն հայտնի դարձած ոչ հրապարակային տեղեկատվությունը, եթե օրենքով կամ Համալսարանի ներքին իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ:

8) Սույն բաժնի 4-րդ մասով նախատեսված պարտականությունը պահպանվում է նաև անձի՝ Համալսարանի հետ աշխատանքային, ուսումնական կամ այլ հարաբերությունների դադարելուց հետո:

9) Եթե ոչ հրապարակային տեղեկատվությունը երրորդ անձանց հասանելի է դարձել առանց իրավաչափ հիմքի, այդ մասին տեղեկացած անձը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Համալսարանի իրավասու ստորաբաժանմանը կամ անմիջական ղեկավարին:

10) Արգելվում է առանց իրավաչափ հիմքի մուտք գործել, պատճենահանել, լուսանկարել, ձայնագրել, տեսագրել կամ տարածել Համալսարանի տեղեկատվական համակարգերում, փաստաթղթերում, գրանցամատյաններում կամ փակ տարածքներում պահվող տվյալները:

19. Համալսարանի գույքի, ռեսուրսների և հեղինակության պաշտպանություն

1. Համալսարանական համայնքի յուրաքանչյուր անդամ պարտավոր է խնամքով, նպատակային և իրավաչափ օգտագործել Համալսարանի գույքը, տարածքը, տեխնիկական միջոցները, ֆինանսական միջոցները, տեղեկատվական համակարգերը, տվյալները, փաստաթղթերը, աշխատաժամանակը, ուսումնական ժամանակը, մարդկային ռեսուրսները, գրադարանային և գիտական ռեսուրսները, խորհրդանիշները և գործարար համբավը:
2. Համալսարանի ռեսուրսները պետք է օգտագործվեն միայն ուսումնական, գիտական, աշխատանքային, վարչական կամ Համալսարանի իրավաչափ գործունեության նպատակներով:
3. Արգելվում է՝
   1) Համալսարանի ռեսուրսներն օգտագործել անձնական, ընտանեկան, առևտրային, կուսակցական, քարոզչական կամ այլ ոչ իրավաչափ նպատակներով,
   2) վնասել, յուրացնել, ոչ նպատակային կամ ոչ իրավաչափ օգտագործել Համալսարանի գույքը,
   3) Համալսարանի աշխատողների, ուսանողների կամ այլ ներգրավված անձանց ժամանակը կամ աշխատանքը օգտագործել անձնական կամ ոչ իրավաչափ նպատակներով,
   4) կեղծել պաշտոնական փաստաթղթեր, ստորագրություններ, գնահատականներ, տեղեկանքներ, գրանցումներ կամ այլ տվյալներ,
   5) ներկայանալ Համալսարանի անունից առանց համապատասխան լիազորության,
   6) դրսևորել վարքագիծ, որը կարող է էական վնաս հասցնել Համալսարանի կրթական միջավայրին, բարի համբավին կամ հանրային վստահությանը:

20. Օբյեկտիվություն և կողմնակալության բացառում

1. Համալսարանական համայնքի անդամը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս դրսևորել անաչառություն, օբյեկտիվություն և հավասար վերաբերմունք:
2. Համալսարանական համայնքի անդամը պարտավոր է զերծ մնալ խոսքով, գործողությամբ կամ անգործությամբ կողմնակալություն ցուցաբերելուց:
3. Արգելվում է որոշում կայացնելիս, գնահատելիս, ընտրելիս, նշանակելիս, մրցույթ անցկացնելիս, խրախուսելիս կամ պատասխանատվության հարց քննարկելիս առաջնորդվել անձնական

համակրանքով, հակակրանքով, հույզերով, ենթադրություններով, քաղաքական կամ այլ կողմնակի ազդեցությամբ:

4. Համալսարանական համայնքի անդամը պարտավոր է գործել այնպես, որ իր անաչառության, անկախության կամ օբյեկտիվության նկատմամբ ողջամիտ կասկած չառաջանա:

21. Երեխաների, անչափահասների և խոցելի անձանց հետ շփման հատուկ պահանջներ

1. Եթե Համալսարանի գործունեության շրջանակում ուսանողները, աշխատողները կամ այլ ներգրավված անձինք շփվում են երեխաների, անչափահասների կամ խոցելի խմբերի ներկայացուցիչների հետ, նրանք պարտավոր են պահպանել նրանց անվտանգության, արժանապատվության, անձնական տվյալների պաշտպանության և լավագույն շահի ապահովման պահանջները:
2. Արգելվում է երեխաների, անչափահասների կամ խոցելի խմբերի ներկայացուցիչների հետ ցանկացած այնպիսի վարքագիծ, որը կարող է հանգեցնել նրանց արժանապատվության նվաստացմանը, հոգեբանական ճնշմանը, շահագործմանը, ոչ պատշաճ ազդեցությանը կամ իրավունքների խախտմանը:

ԳԼՈՒԽ 5. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ղեկավարների և կառավարման լիազորություն ունեցող անձանց հատուկ պարտականությունները

1. Համալսարանի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձինք, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, ակադեմիական և վարչական կառավարման լիազորություն ունեցող անձինք պարտավոր են՝
   1) անձամբ պահպանել վարքագծի այն պահանջները, որոնք ակնկալում են իրենց ենթակայությամբ կամ համակարգմամբ գործող անձանցից,
   2) ապահովել իրենց ղեկավարության ներքո գտնվող անձանց իրազեկվածությունը Կանոնագրքի, ակադեմիական ազնվության, շահերի բախման, նվերների, ազդարարման, անձնական տվյալների պաշտպանության և անվտանգ կրթական միջավայրի պահանջների վերաբերյալ,
   3) իրենց իրավասության սահմաններում կանխել ոչ իրավաչափ, ոչ բարեվարք, ոչ օբյեկտիվ կամ խտրական որոշումների կայացումը,
   4) չտալ օրենքին, Համալսարանի կանոնադրությանը, ներքին իրավական ակտերին կամ սույն Կանոնագրքին հակասող հանձնարարականներ,
   5) չտալ հանձնարարականներ, որոնք դուրս են իրենց կամ հանձնարարականը կատարող անձի լիազորությունների շրջանակից,
   6) կոռուպցիոն բնույթի, շահերի բախման, սեռական ոտնձգության, բուլինգի, մոբինգի, խտրականության կամ այլ լուրջ խախտման վերաբերյալ տեղեկություն ստանալու դեպքում ձեռնարկել գործուն քայլեր՝ հաղորդման պատշաճ ընթացքը ապահովելու համար,
   7) միջամտել իրենց ենթակայությամբ գործող անձանց նկատմամբ ոտնձգության, ճնշման, խտրականության կամ այլ անարդար վերաբերմունքի դրսևորման դեպքում,
   8) խուսափել վերադասության լիազորության չարաշահումից,
   9) Կանոնագրքի կիրառման վերաբերյալ հարցերի դեպքում խորհրդակցել էթիկայի հանձնաժողովի, բարեվարքության հարցերով պատասխանատու անձի կամ իրավասու ստորաբաժանման հետ:

23. Ակադեմիական անձնակազմի հատուկ պարտականությունները

1. Ակադեմիական անձնակազմի ներկայացուցիչը պարտավոր է՝
   1) հարգել ուսանողների արժանապատվությունը, իրավունքները և ակադեմիական ազատությունը.
   2) ուսանողների նկատմամբ չդրսևորել շահագործում, հետապնդում, խտրականություն, սեռական ոտնձգություն կամ ոչ պատշաճ ազդեցություն,
   3) գնահատել ուսանողների կատարողականը և ձեռքբերումները միայն Համալսարանի գնահատման կարգերի և նախապես սահմանված չափորոշիչների հիման վրա,
   4) դասընթացի սկզբում ուսանողներին ներկայացնել գնահատման չափորոշիչները, ակադեմիական ազնվության պահանջները, աղբյուրների օգտագործման և արհեստական բանականության գործիքների թույլատրելի կամ արգելված կիրառման պայմանները,
   5) հարգել բազմակարծությունը և ակադեմիական քննարկման ազատությունը,
   6) զերծ մնալ ուսանողներին անձնական, կուսակցական, քաղաքական, կրոնական, առևտրային կամ այլ ոչ ուսումնական նպատակների համար ներգրավելուց,
   7) սեփական վարքագծով նպաստել Համալսարանի հեղինակությանը և մանկավարժական մասնագիտության արժանապատվությանը:

ԳԼՈՒԽ 6. ԽՐԱԽՈՒՍԵԼԻ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐ

24. Խրախուսելի վարքագծի չափանիշները

1. Համալսարանական համայնքի անդամներին խրախուսվում է՝
   1) հաղորդակցվել հարգալից, կառուցողական և մասնագիտական լեզվով,
   2) անհամաձայնությունը արտահայտել փաստարկված և ոչ վիրավորական ձևով,
   3) նպաստել ներառական, աջակցող և անվտանգ կրթական միջավայրի ձևավորմանը,
   4) աջակցել նոր ուսանողների և նոր աշխատողների ինտեգրմանը,
   5) նկատել և կանխարգելել մեկուսացման, ծաղրի, խմբային ճնշման կամ ոչ պատշաճ վարքագծի նախանշանները,
   6) բարդ որոշումների դեպքում նախապես քննարկել շահերի բախման հնարավոր ռիսկերը,
   7) պահպանել որոշումների հիմնավորումները և անհրաժեշտ փաստաթղթավորումը,
   8) խուսափել ոչ ֆորմալ միջնորդություններից, պայմանավորվածություններից և ազդեցության փորձերից,
   9) սոցիալական ցանցերում և թվային հարթակներում արտահայտվել չափավոր, փաստարկված և հարգալից,
   10) ստուգել տեղեկության հավաստիությունը նախքան այն տարածելը,
   11) մասնակցել էթիկայի, ակադեմիական ազնվության, շահերի բախման կանխարգելման, անձնական տվյալների պաշտպանության, ազդարարման, քաղաքական չեզոքության և անվտանգ կրթական միջավայրի վերաբերյալ ուսուցումներին,
   12) սեփական վարքագծով նպաստել Համալսարանի հեղինակությանը, հանրային վստահությանը և մասնագիտական մշակույթի զարգացմանը,
   13) իր իրավասության սահմաններում աջակցել սխալների, բացթողումների և համակարգային ռիսկերի բացահայտմանը ու կանխարգելմանը:

ԳԼՈՒԽ 7. ԷԹԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

25. Էթիկական խորհրդատվություն ստանալու իրավունքը

1. Համալսարանական համայնքի անդամը կարող է դիմել էթիկայի հանձնաժողովին, բարեվարքության հարցերով պատասխանատու անձին կամ Համալսարանի իրավասու ստորաբաժանմանը՝ Կանոնագրքի դրույթների կիրառման, շահերի բախման, նվերների, ակադեմիական ազնվության, անձնական տվյալների պաշտպանության, հաղորդման կամ այլ էթիկական հարցերի վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով:
2. Էթիկական խորհրդատվությունը կարող է տրամադրվել բանավոր կամ գրավոր ձևով՝ կախված հարցի բնույթից և դիմողի պահանջից:
3. Էթիկական խորհրդատվության նպատակն է կանխել հնարավոր խախտումները, աջակցել բարեվարք որոշումների կայացմանը և ապահովել Կանոնագրքի միասնական կիրառումը:
4. Խորհրդատվություն ստանալու փաստը չի ազատում անձին օրենքով, պայմանագրով կամ ներքին իրավական ակտերով սահմանված պարտականություններից, սակայն կարող է հաշվի առնվել անձի բարեխղճությունը գնահատելիս:

ԳԼՈՒԽ 8. ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ, ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ

26. Կանխարգելման և իրազեկման միջոցառումները

1. Համալսարանը ապահովում է սույն Կանոնագրքի հասանելիությունը համալսարանական համայնքի համար:
2. Այդ նպատակով Համալսարանը կարող է իրականացնել՝
   1) ներածական ուսուցումներ նոր ուսանողների և աշխատողների համար,
   2) պարբերական վերապատրաստումներ ակադեմիական, վարչական և ղեկավար անձնակազմի համար.
   3) ակադեմիական ազնվության վերաբերյալ իրազեկման միջոցառումներ,
   4) շահերի բախման, նվերներ ընդունելու սահմանափակումների, ոչ նյութական առավելությունների, պաշտոնական դիրքի չարաշահման և ազդարարման թեմաներով դասընթացներ,
   5) սեռական ոտնձգության, խտրականության, բուլինգի և մոբինգի կանխարգելման միջոցառումներ,
   6) անձնական տվյալների պաշտպանության, ոչ հրապարակային տեղեկատվության և թվային վարքագծի վերաբերյալ իրազեկում,
   7) քաղաքական չեզոքության և կրթական միջավայրի ապաքաղաքականության վերաբերյալ իրազեկում,
   8) անանուն հաղորդման և էթիկայի հանձնաժողովի աշխատանքի վերաբերյալ պարզ ուղեցույցներ:
3. Կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները իրենց իրավասության սահմաններում նպաստում են Կանոնագրքի իրազեկմանը, խախտումների կանխարգելմանը և հարգալից միջավայրի ձևավորմանը:

ԳԼՈՒԽ 9. ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ, ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

27. Կանոնագրքի հրապարակումը և հասանելիությունը

1. Սույն Կանոնագիրքը հրապարակվում է Համալսարանի պաշտոնական կայքում և ներքին հաղորդակցման հարթակներում:
2. Համալսարանը ապահովում է Կանոնագրքի ներքին հաշվառումը և պահպանումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Համալսարանի ներքին փաստաթղթաշրջանառության կանոններին համապատասխան:
3. Կանոնագրքի ուժի մեջ մտնելուց հետո Համալսարանի համապատասխան ստորաբաժանումները ապահովում են դրա պահանջների ներկայացումը ուսանողներին, աշխատողներին և այլ ներգրավված անձանց՝ իրենց կարգավիճակին համապատասխան եղանակով:
4. Կանոնագրքի պահանջներին ծանոթանալու փաստը կարող է հավաստվել ստորագրությամբ, էլեկտրոնային հաստատմամբ կամ Համալսարանի կողմից սահմանված այլ եղանակով:

ԳԼՈՒԽ 10. ՎԵՐԱՆԱՅՈՒՄ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

28. Կանոնագրքի վերանայումը

1. Սույն Կանոնագիրքը ենթակա է պարբերական վերանայման:
2. Վերանայման հիմքեր կարող են լինել՝
   1) Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխությունները,
   2) Համալսարանի կանոնադրության կամ ներքին իրավական ակտերի փոփոխությունները,
   3) էթիկայի հանձնաժողովի գործունեության արդյունքները,
   4) հաղորդումների և խախտումների վերլուծությունը,
   5) ուսանողների և աշխատողների հետադարձ կապը,
   6) կրթական միջավայրում նոր ռիսկերի առաջացումը,
   7) միջազգային լավագույն փորձի փոփոխությունները:
3. Կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարվում են այն հաստատած իրավասու մարմնի կողմից՝ Համալսարանի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:
4. Սույն Կանոնագրքի դրույթների վերաբերյալ պաշտոնական պարզաբանումները տրվում են Համալսարանի իրավասու մարմնի կամ իրավասու ստորաբաժանման կողմից՝ Համալսարանի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 11. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

29. Կանոնագրքի ուժի մեջ մտնելը և կիրառումը

1. Սույն Կանոնագիրքն ուժի մեջ է մտնում այն հաստատելու մասին իրավական ակտով սահմանված ժամկետում:
2. Սույն Կանոնագիրքը պարտադիր է դրա գործողության շրջանակում գտնվող անձանց համար:
3. Սույն Կանոնագրքի դրույթների չիմացությունը չի ազատում համալսարանական համայնքի անդամին դրանց պահպանման պարտականությունից, եթե Կանոնագիրքը սահմանված կարգով հրապարակվել և հասանելի է դարձվել:

4. Սույն Կանոնագիրքը կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Համալսարանի կանոնադրության և Համալսարանի այլ ներքին իրավական ակտերի հետ համատեղ:
5. Սույն Կանոնագրքի դրույթների և ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջև հակասության դեպքում կիրառվում են ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի դրույթները:

ՁԵՎԱԹՈՒՂԹ 1
ԿԱՆՈՆԱԳՐՔԻՆ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ _____,

հավաստում եմ, որ ծանոթացել եմ Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի վարքագծի կանոնագրքին, հասկացել եմ դրանում սահմանված պարտադիր և խրախուսելի վարքականոնները և պարտավորվում եմ պահպանել դրանք իմ ուսումնական, աշխատանքային, գիտական, վարչական կամ

Համալսարանի հետ կապված այլ գործունեության ընթացքում:

Անուն, ազգանուն՝ _____

Կարգավիճակ՝ _____

Ստորաբաժանում կամ ֆակուլտետ՝ _____

Ստորագրություն՝ _____

Ամսաթիվ՝ _____